Գավառի համայնքապետարանի աշխատակազմի
իրավաբանական բաժնի պետ
Արա Գեւորգյան

(անմիջական ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

»03« հունվար 2023 թ-ից մինչև » 30 « հունիս 2023 թ-ը

Գավառի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ / պաշտոնի ծածկագիր 2.3-6/ պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ

Հաշվետվությունը գրվում է անձամբ, շարադրվում է ազատ ոճով, առանց ջնջումների:
Հաշվետվությունը պետք է բովանդակի առնվազն հետևյալ տեղեկությունները.
ա/ տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված իրավունքներից և պարտականություններից բխող աշխատանքների կատարումը և դրանց կատարման ժամկետները.
բ/անմիջական ղեկավարի կողմից տրված գրավոր և/կամ բանավոր հանձնարարականների կատարումը.
գ/ որպես ներկայացուցիչ աշխատակազմից դուրս շփումները (այդ թվում՝ մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվելը), ինչպես նաև առաջարկություններով, զեկուցումներով և հաշվետվություններով հանդես գալը.
դ/հաշվետու ժամանակահատվածում վերապատրաստման դասընթացների մասնակցությունը.

2023թ. 1-ին կիսամյակի ընթացքում որպես Գավառի համայնքապետարանի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ՝ մասնակցել եմ բաժնի աշխատանքների ծրագրմանը, բաժնի պետի հանձնարարությամբ՝ նաև կազմակերպմանը, կատարել եմ բաժնի պետի հանձնարարականները: Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցել եմ որոշումների ընդունմանը, հանձնարարականների կատարմանը, հիմնախնդիրների լուծմանը, ինչպես նաև՝ իմ լիազորությունների շրջանակներում, բաժնի առջև դրված խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներին:

Համայնքի բնակիչներին տվել եմ իրավաբանական խորհրդատվություն՝ կատարելով իրավաբանական գիտելիքների պրոպագանդում:

Նախապատրաստել եմ հայցադիմումներ, վարչական իրավախախտումների վերաբերյալ որոշման նախագծեր , բնակիչների դիմում-բողոքների հետ կապված հարցերով, անհրաժեշտության դեպքում, կազմակերպել եմ քննարկումներ, ստուգայցեր և արդյունքների մասին զեկուցել բաժնի պետին:

Իմ կողմից մշակված իրավական ակտերի, ծրագրային փաստաթղթերի և նյութերի նախագծերը ներկայացվել են բաժնի պետի քննարկմանը:

Իմ կողմից իրականացվել են վերահսկողություն և մասնակցություն համայնքապետարանում վարչական վարույթի հարուցման գործընթացի նկատմամբ:

Բաժնի պետի հանձնարարությամբ, մասնակցել եմ տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին.

իմ լիազորությունների սահմաններում, նախապատրաստել և բաժնի պետին եմ ներկայացրել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

Աշխատել եմ գաղտնի տեղեկատվության հետ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված գաղտնի տվյալների հասանելիության կարգի, իմ իրավասությունների սահմաններում մասնակցել եմ զորակոչային, զորահավաքային բնագավառում ՀՀ օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց վերապահված լիազորությունների իրականացմանը

Իմ կողմից իրականացվել են պաշտոնի անձնագրով չսահմանված օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և այլ պարտականություններ:

2023թ .1-ին կիսամյակի ընթացքում որպես հանձնաժողովի նախագահ՝ղեկավարել և կոորդինացրել եմ Գավառի համայնքապետարանի Սոցիալական աջակցության հանձնաժողովի աշխատանքները:

Ավետիք Ղազանչյան

---------- ----------

(ստորագրությունը) (համայնքային ծառայողի անուն, ազգանունը